

«Հնարավոր իրադրությունները հստակորեն տեսնելը ռազմարվե՛ստ է:

Խաղաղ ժամանակներում կարգի խանգարումների մասին շմոռանալը ռազմարվե՛ստ է:

Պետությունների իրավիճակը հասկանալը, խաթարման ժամանակն իմանալը և խանգարումը կանխելը մինչ այն կպատահի՝ նոյնպես ռազմարվե՛ստ է»<sup>1</sup>:

Յազյու Մինենորի  
Սամուրայ և ռազմական  
տեսաբան (17-րդ դար)

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց քաղաքակրթության անվտանգ գոյությունն ու զարգացումը երկարաժամկետ կտրվածքով դեռևս ապահովված չեն: Հայ ժողովուրդն իր հայրենիքում ազատ, անկախ և անվտանգ ապրելու բավարար պայմաններ և երաշխիքներ տակավին չի ստեղծել: Խորհրդային կայսրության փլուզումից ի վեր արդի Հայաստանը<sup>2</sup> շարունակում է «լինել», թե՞ չլինելու» սահմանային իրավիճակում գտնվել՝ դեմք հանդիման արտաքին ու ներքին մի շարք մահացու սպառնալիքների, որոնցից ամենա-

<sup>1</sup> Մեջբերումը քաղված է Յազյու Մինենորիի «Գիրք՝ ռազմարվեստում ընտանեկան ավանդութների մասին» աշխատությունից, տե՛ս Thomas Cleary, *The Japanese Art of War: Understanding the Culture of Strategy* (Boston & London: Shambhala Classics, 1992), p. 71.

<sup>2</sup> Արդի Հայաստան ասելով՝ նկատի ունենք ռազմավարական առումով մեկ միավոր կազմող Հայաստանի Հանրապետությունն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

մեծն Աղրբեջանի հնարավոր ուազմական նոր ագրեսիան է: Բայտ այդմ էլ՝ Հայաստանի ընթացիկ պետականաշինության համար ավելի քան կարևորվում է ուազմավարական միտքն ու նրան վերապահված դերակատարությունը:

Յափոք, ազգային անվտանգությունն ու ուազմավարությունը հայության քաղաքական գիտակցության մեջ թույլ զարգացած շերտեր են<sup>3</sup>: Այդպիսի վիճակի հիմնական պատճառներից են.

ա) սեփական պետուրյան երկարատև չգոյուրյունը.

թ) հայոց վերնախավի խնդիրը՝ Կիլիկյան Հայաստանի անկումից (1375թ.) ի վեր ազգային ղեկավարության կազմում ուազմական գործի և անվտանգության հարցերի մեջ շմասնագիտացող դասերի՝ հոգեորականության և վաճառականության գերակշռություն ու տնօրինումը և, միաժամանակ, զինվորականության գրեթե իսպառ բացակայությունը: Այս առումով բացառություն են կազմում հայոց զինյալ ազատագրական պայքարի երկու անշատ ժամանակաշրջան՝ 1722-35 և 1890-1921 թվականները, որոնք, սակայն, չհասնելով իրենց նպատակներին և ընդհատվելով, ի վիճակի չեղան արմատական փոփոխություններ առաջ բերելու համազգային ղեկավարողակների մտայնության մեջ: Իսկ 1920-1990 թթ.՝ Հայաստանի անկախության վերականգնմանն անմիջականորեն նախորդած խորհրդային շրջանում, օտարածին գաղափարախոսություն քարոզող դրածո իշխանությունն ազգային քաղաքական մտքի ուղղակի թշնամին ու խեղդողն էր.

զ) օտար տիրապետուրյան ամբողջ շրջանում հայոց վերնախավի կայսերական ուժերի հետ շարունակական ակամա կամ հոժարակամ համագործակցությունը, որը մտավոր ու հոգեբանական արգելք-

<sup>3</sup> Այս մասին տե՛ս նաև մեր «Խազմավարական խոռոչները հայոց քաղաքական գիտակցության մեջ կամ Հայաստանի աշխարհաքաղաքական գոյության աքսիոմները», «Հայրենատիրություն» մատենաշար, հատոր Ա. – Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը: Վերլուծական և փաստագրական նյութերի ընտրանի: Կազմեց և խմբագրեց Ա. Այվազյանը, Երևան, «Լուսակն» հրատ., 2006, էջ 27-44:

ներ առաջացնելով՝ թույլ չէր տալիս ճշտորոշել բուն հայկական շահերը, ոչ էլ բնականաբար, անվտանգության բնագավառում մշակել ու կիրառել գործուն ազգային ռազմավարություն։ Այդպիսի պայմաններում առավել արդյունավետ էր դառնում օտար ուժերի նպատակասլաց, հետևողական և ապակողմորոշիչ ներազգեցությունը հայ քաղաքական գիտակցության վրա։

դ) Հայաստանի ազատագրության հարցին նվիրված մաֆի ու նրա հեղինակների անողոք ննջումը, որ միջոցների մեջ խտրականություն չէր գնում՝ նյութական ռեսուրսներից զրկում, ազատագրական գաղափարների նենդափոխում և ծաղր, սպառնանք ու ահաբեկում, բռնի լուեցում, վերջապես՝ ֆիզիկական հաշվեհարդար։

Արդյունքում, այսօր էլ՝ անկախացումից 16 տարի անց, հասարակական մտանության իներցիոն ուժով, հայ քաղաքական գիտակցությունը և ազգային անվտանգությունը դեռևս խորի ու դժվար համատեղելի հասկացություններ են։ Մեր օրերում էլ հայ զանգվածների, ինչպես նաև նրանց վերնախավի մի զգալի (եթե չասենք՝ գերակշիռ) մասը Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգության ապահովումը տակավին համարում է անձնական պատասխանատվության դաշտից դուրս, երևութական խնդիր։ Այս վտանգավոր դիրքորոշումը վերջին հարյուրամյակների ընթացքում քանից արդյունքավորվել է համազգային աղետներով։

Հայ քաղաքական գիտակցության և ազգային անվտանգության համատեղելիությունը, ավելին՝ նրանց միաձուլումը հրատապ խնդիր է, որի լուծումները գտնվում են կառուցվածքային, տեղեկատվական, գաղափարահոգեբանական ու գիտական բնագավառներում։

Իբրև ելակետային սկզբունք՝ պետք է վերջապես ընդունել մի պարզ ռազմավարական ճշմարտություն։ ազգային անվտանգության սպառնալիքների ու պահանջների ճշտումը, դրանց չեզոքացման կամ նվազեցման միջոցների որոշումը շի կարելի վստահել որևէ երրորդ կողմի՝ լինի դա պետություն, ռազմավարական դաշինք, թե օտարազգի մասնագետների խումբ։ Այդ աշխատանքը պետք է կատարվի միմիայն սեփական մտավոր ուժերով, որքան էլ դրանք առայժմ սահմանափակ լինեն։

Այլապես մեզ շարունակելու են հրամցնել Հայաստանի շուրջը տիրող աշխարհաքաղաքական իրադրության աղճատված պատկերներ, երկրի ներսում առկա սոցիալ-տնտեսական իրադրության բարելավման փակուղի տանող լուծումներ և ուրիշների ռազմավարական նպատակներին համապատասխանեցված գործողությունների ծրագրեր, որոնց արդյունքում գարձալ ազգովին կարող ենք հայտնվել շարդած տաշտակի առջև, այս անգամ՝ արդեն ընդմիշտ:

Անհրաժեշտ է ռազմավարական մտքի հայկական դպրոցի ստեղծում՝ ազգային և պետական հովանավորություն վայելող գիտահետազոտական կենտրոնների հիմնադրում, հայրենասեր ու բարձրակարգ մասնագետների պատրաստում: Այս ուղղությամբ գործունեությունն ուշացումով, բայց, կարծես, սկսված է, թեև արդյունքներն առայժմ անտեսանելի են ու գոհացուցիչ համարվել չեն կարող:

Ամեն դեպքում, պետական ու ոչպետական հայ ռազմավարական միտքը կարող է իսկապես ինքնուրուցնություն ձեռք բերել, եթե (1) փինանսավորվի ազգային աղյուսներից և (2) իր գործունեության մեջ առաջնորդվի հետևյալ սկզբունքներով.

- Հայաստանի անվտանգության ապահովումը վեր է ամեն տեսակի կուսակցական, խմբակային, հաստվածական, կորպորատիվ-առևտրային և անձնական շահերից, նախասիրություններից ու պատկանելություններից:
- Հայ ժողովրդի ազգային արժանապատվությունը պետականատեղծ արժեք է, որը պաշտպանության ու զարգացման կարիք ունի:
- Հայ ռազմավարաբանը և անվտանգության մասնագետը, ինքնաբերաբար հայտնվելով թուրք-ադրբեջանական դաշինքի և նրանց սատարող ուժերի՝ Հայաստանի ու հայության գեմ ծավալած տեղեկատվական-քարոզական կատաղի պատերազմի հորձանուտում, արժանապատվորեն մարտի բռնվելուց բացի, այլ ելք՝ արդյունավետ և ազգօգուտ աշխատանքի այլ ուղի, պարզապես չունի: Օբյեկտիվորեն ընթացող, հաճախ անհավասար, այդ

պայքարից որոշ հայ մասնագետների խուսափումն ու խուսանավումն իրականում ինքնախաբեռություն է և անձնատվություն, ոչ այլ ինչ է, քան հայոց անվտանգության շահերի շառավղից դուրս գործունեություն։ Ավելին՝ այդպիսի գործունեությունը, վերջին հաշվով, օտար ուժերի շահերի պաշտպանություն է։

- Ի տարբերություն դիվանագիտության, ուազմավարական մտքի նպատակային լսարանը գլխավորաբար ներսում է՝ ներագգային, այլ ոչ դրսում՝ միջազգային։ Արտասահմանյան լսարանն իբրև գլխավոր ունկնդիր դիտելն ի շիք է գարձնում ուազմավարական հետազոտության բուն արժեքը, որովհետև այդ գեպքում պարտադիր են դառնում թերասացությունները, վերապահումները, իրականության որոշակի աղճատումները, առածգական («դիվանագիտական») ձեւակերպումները, որոնք անխուսափելիորեն շփոթեցնում և ապակողմնորոշում են ներքին լսարանը, առավել ևս, եթե այդ լսարանը հայկական է՝ ազգային անվտանգության խնդիրներին անհաղորդ և անպատրաստ, այդ բնագավառում տակավին խարխափող մի հանրույթ։ Մինչդեռ միայն ուազմավարական իրողություններն ազատ, անկաշկանդ ու պարզ վերլուծող միտքը կարող է լինել այն հիմքը, որի վրա հնարավոր կլինի կառուցել ողջամիտ դիվանագիտություն, ասել է թե՝ արտաքին աշխարհում մեր իրական պահանջներին համապատասխանեցված խոսք ու գործունեություն։

«Հայրենատիրություն» մատենաշարի այս երկրորդ հատորում ընդգրկված ուսումնասիրությունները հիմնականում համապատասխանում են հայ ուազմավարական մտքի կայացման ու զարգացման վերոնշյալ սկզբունքներին։ Սակայն հայ ուազմավարագիտության օրակարգն այնքան տարողունակ է (այն, փաստորեն, ներառում է համաշխարհային քաղաքականության կարևորագույն ոլորտները)<sup>4</sup> և այնշափ թերամշակ,

---

<sup>4</sup> Տե՛ս աստ, ուսումնասիրություն №2:

որ այս ստվար հատորն ընդգրկում, ավելի ճիշտ՝ ուրվագծում է քննության և քննարկման կարուտ բազմաթիվ հարցաշարերից ընդամենը մի քանիսը, այդ թվում։

1. Հայաստանի և նրա հավանական հակառակորդների՝ Աղբեջանի և Թուրքիայի զինված ուժերին ու ուղմական հայեցակարգերին վերաբերող խնդիրները (Բաժին Ա.)։
2. Հայաստանի անվտանգության համար ազատագրված տարածքի կենսական նշանակության փաստարկումները (Բաժին Բ.)։
3. Հայաստանի տեղեկատվական անվտանգության որոշ անհետաձգելի խնդիրների վերլուծում-բացահայտումները (Բաժին Գ.)։
4. Հայ հասարակության և Հայաստանի պետության, մասնավորապես, նրա բանակի միջև հարաբերությունների զարգացման ու բարելավման քննարկումը (Բաժին Դ.)։
5. Հայ-թուրքական հարաբերություններում էթնիկ հոգեբանության կարևոր գերակատարման հետազոտումը (Բաժին Դ.)։
6. Ռազմավարության արևմտյան ժամանակակից տեսությունների ակնարկը և համաշխարհային պատմության մեջ ուղղմարվեստի առաջին տեսաբան Սույն Ցըզիի «Ռազմական արվեստի մասին» անմահ երկի հայերեն թարգմանությունը (Բաժին Ե.)։
7. Հայաստանի ռազմական պատմության արդիական նշանակություն ունեցող որոշ դրվագների վերլուծությունները, ինչպես նաև կայսերական ուժերի՝ հնուց ի վեր մինչև այսօր կիրառած գաղտնի գործողությունների մի ամերիկացի հեղինակի հետազոտությունը (Բաժին Զ.)։
8. Արցախյան պատերազմին և թուրքական հատուկ ծառայություններին նվիրված գրքերի, ինչպես նաև անգլերենով ու ռուսերենով վերջերս հրատարակված և լայնորեն գովազդված մի մենագրության գրախոսությունները (Բաժին Է.):

Հնդ որում, ներկայացված թեմաների մի մասն ընտրել ենք նրանց խիստ այժմեականության, մյուսը՝ տեսական արժեք ներկայացնելու առումով։

Առաջասարակ, ապագայի նկատմամբ մեկ ռազմավարությամբ ու գործողությունների մեկ սցենարով առաջնորդվելը տանում է փակուղի, մանավանդ այժմ, երբ աշխարհը զարգանում է աներևակայելի արագությամբ ու բազմաթիվ անհայտներով։ Այս առումով, կարծում ենք, շահեկան է, որ հատորի հեղինակների մի մասը, առողջ թերահավատություն ցուցաբերելով Հայաստանի ազգային անվտանգության բնագավառում առկա իրավիճակի հանդեպ, ներկայանում է մասնագիտական ու, որ ամենակարևորն է, կառուցողական քննադատությամբ և առաջարկություններով։

Հատորում գետեղված հետազոտությունների ճնշող մեծամասնությունը հատուկ գրվել է սույն ժողովածուի համար ու հրապարակվում է առաջին անգամ<sup>5</sup>։

**05.02.2007**

### ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

Քաղաքական գիտությունների դոկտոր,  
«Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի տնօրեն

---

<sup>5</sup> Որոշակի խմբագրումներով վերահատարակվում են միայն թիվ 2, 7, 14, 15 հետազոտությունները։